

ՏԷՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որևէ

գրութիւն պետք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի

ԳԱՀԻՐԷ (Նախակապույտի)

Թիւ.


E. TOROSSIAN

Dircc.-propr. du journal arménien

ARCHALOUICR

LE CAIRE (EGYPTE)

Boîte Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲՈՒԺԱՆՈՐԴԱԳԻՐԻ ԿԱՆԻԿ

ԵՊԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ձրակի 20	
Վեցամսեայ » 12	

ԲՈՒԺԱՆՈՐԴԱԳԻՐԻ ԿԱՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խնայարարեան վրայ է :

Խնայարարեան ուղղուած  
գրութիւնքի կէ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱԲԱԹ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՋԲԸ

Օսանիյէ դեղարանիկն դիւնացի փողոցիկն մէջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամէն օր, առա-  
ւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր  
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,  
կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարտերակներ, Գիտեր,  
Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագրերներ,  
Կանոնագրերներ, Տոմար և այլ և այլ վաճառ-  
ուականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և  
չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

ՀԱՇՎԵԿԵՐՈՒԹԻՒՆ. — Համառօտիւ Լաւ-  
րան-Բնթերցատուն տիրաւորով կազմուած  
ընկերութեան անց ու գարձերուն և Հայ-  
րապետական կոնգրէի իմաստին վրայ գրե-  
լէս վերջ, անոր վարչութեանց գործած ու-  
րիչ կարգ մը սխալներու և զանցառու-  
թեանց վրայ ալ առանց կանգ առնելու,  
կ'անցնիմ հաշուեկշռոյն:

Հայիւ և կչիւ: Երբ արգարութիւնը  
և ուղղամտութիւնը այս կշռոյն մէջ կը  
գրուի, հոս իր ծանրութեան չափը սրոյ  
կերպով երևան կուգայ: Ուրեմն անուա-  
նական Լաւրան-Բնթերցատան, կամ սա ծի-  
ծաղելի բառով, յրջուն ընթերցատան բե-  
րան թերթին առաջին թուոյն մէջ հրա-  
տարակուած ութամսեայ հաշուեկշռոյն, մեր  
աչքին առջև բերել կ'արժէ վայրկեան մը  
ևեթ:

Չ'մոռնալու համար ըսենք որ, հաշուե-  
կշռոյն ընդհանուր ժողովոյ կազմուածեալ  
գիւանին կողմէ վաւերացեալ լինելու առա-  
ւելութիւնն ալ ունի, ու յետոյ քննենք  
երեւցած թերութիւններն:

Գանի որ գիւանի առաջին Ատենապետը  
և Բ. րդ. առեւտրագիրը, ինչպէս բռնուած  
ընթացքներէն և մէջ տեղ գտնուած գրու-  
թիւններէն կ'երևի, համաձայն եղած չ'են.  
Լաւագոյն չ'պիտի ըլլար Բնթ. Ժողով գու-  
մարել. զիրար հասկնալ. գիւանի անդամոց  
թիւը ամբողջացնել — եթէ Ա. Ատենապետի  
հրատարականը ետ առնել տալ կարելի  
չ'լինէր, — ու ըստ այնմ վաւերացնել  
հաշուեկշռոյն:

Ընկերութեան մը գանձը ընդհանրա-  
պէս Գանձապետի մը քով կը գտնուի. հե-  
տեւար հաշուեկշռոյ մը տակ անհրաժեշտ  
նկատուած է գանձապետին ստորագրու-  
թիւնը: Արդեօք Լաւրան-Բնթերցատան  
Գանձապետը լոկ անուանակա՞ն է և ընկե-  
րութեան գանձը գործ. ժողովոյ գիւանին  
միայն պահպանութեան յանձնուած է որ  
Գանձապետի ստորագրութեան կարևորու-  
թիւն ընծայուած չ'է:

Որչափ որ կը յիշենք, այդ միևնոյն  
Գործադիր ժողովն, թատերական ներկայաց-  
ման առթիւ, Գանձապետին ստորագրութիւնը  
և կնիքը չ'կրող տոմսերն անվաւեր կը նկա-  
տէր. աւելի բանաւոր չ'պիտի ըլլայ որ  
այժմ ալ իրենց կողմէ ստորագրուած հաշ-  
ուեկշռոյն անվաւեր նկատուի և ասոր ու-  
րիչ քանի մը պատճառներ ալ ունին թուե-  
լու:

Լաւրան — Բնթերցատան անունով «Գե-  
ղարուեանի գերը» անուն տետրակ մը հրա-  
տարակուած և ժողովրդեան մէջ ցրուելու  
է: Եթէ այդ անուանակալ ընկերութիւնը  
ուղղամտութեան և արգարութեան պայշու-  
պաններու ձեռքին մէջ կը գտնուի, ինչո՞ւ  
ուրեմն հրատարակուած հաշուեկշռոյն մէջ  
նշանակուած չ'է վերոյիշեալ տետրակին  
համար եղած ծախքերուն, ինչպէս նաև անկէ  
գոյացած հասոյթներուն քանակութիւնը:

Եթէ ընկերութեան մը մտից և ելից  
ո'կէ մէկ մասը կարելի է հաշուեկշռո-  
ն ներկայացնելու առնել զանց ընել, ինչպէս  
կրնանք վստահիլ թէ ուրիշ շատ մը մտեր  
ալ զանց առնուած չ'են ըլլար. . . :

Իսկ եթէ գա անհատական շահագոր-  
ծումի նպատակաւ հրատարակուած էր,  
ինչո՞ւ ուրեմն Լաւրան — Բնթերցատան ծախ-  
քով հրատարակուեցաւ և նոյն ընկերու-  
թեան անունով վաճառուեցաւ:

Եղան մարդիկ որ այդ տետրակին փո-  
խան 5 — 10 և աւելի զրջ. գին վճարեցին:  
Ինչ կըլա այդ տետրակին հասոյթը և ին-  
չո՞ւ նշանակուած չ'էր հաշուեկշռոյն մէջ:  
Այս և ասանց նման շատ մը կէտեր

նկատողութեան առնելով, համարձակօրէն  
կարելի է յայտարարել թէ՛ նոր Որի և  
Լաւրան-Բնթերցատան վարչութիւնները, ու-  
րոնք միևնոյն անձերն են, մէկ երկու հո-  
գիններուն հետ միացած, յայտնի կերպով  
փոշի փշել կ'ուզեն ժողովրդի աչքին և  
ենթրիկներու վրայ կը հիմնեն թերթ մը,  
որոյ ներկայն անստոյգ, իսկ ապագան բո-  
լորովին խախուտ է:

Եզրակացութիւն. — Զգուշացէ՛ք, բա-  
րեկամներ, ժողովուրդին վստահութիւնը  
նուազեցնող ձեռնարկներու մէջ նետուելէ.  
այսպէսով շատ մը հիմնաւոր ձեռնարկներ  
քաջալերութիւն գտնելէ կը դադարին ամե-  
նուրեք: Եւ փոխանակ ինքզինքնիս խաբե-  
լու թէ յառաջդիմական քայլեր կ'առնենք,  
իրականութեան մէջ բոլորովին յետադէմ  
մնալով՝ այն ատեն կ'զգանք մեր խոշոր  
սխալներն:

Հանրային թերութիւնները պիտի ձազ-  
կենք ըսելով հրապարակ նետուելու ատեն,  
մտքի առջև պէտք է ունենալ թէ՛ հան-  
րութիւնն ալ կրնայ ձազկել այնպիսիներն,  
որոնք իրեն բարի տրամադրութիւններն  
այլ և այլ ձևերով և միջոցներով շարա-  
չար գործածել կ'ուզեն:

ՓԱՅԼԱԿ

ԳՐԶԻ ԶԲՕՍԱՆՔ

ՍԻՐԵԼԻ՝ ԱԼԻՍ

Շատուց է, կարծեմ որ գիրս առած չ'ես. եւ  
երբ առնելու ալ ըլլաս, սակաւին չ'կարդացած,  
կրնաս գուշակած լինել թէ՛ ուսկից կառ ինչով  
սկսած եմ:

Միշտ նոյնը, միշտ նոյնը. այնպէս չէ՛:  
Սակայն արդեօք կարդացածներդ կրկնուե-  
լով, քանիցս կրկնուելով, կրնայ ըլլալ որ գիրս  
կարդալ չ'ուզես. եւ կառ՝ իբր քու նախկին  
գրագածներդ մէկ կողմ ձգես . . . :

Չէ՛, չէ՛. այդպէս չ'ընելուդ սպասով եմ.  
Բայց թէ ինչ ըսիր սա քանի աւուր հիշ-  
ւանդութեան էր լսեցիր. Շխաղը այս տէր ու  
պերային ուսկից գալը ես ալ չ'գիտցայ:

Արդարեւ, սիրելի՛ բարեկամ, մարդուս  
վիճակին անփոփոխ և միօրինակ յարատեւու-  
թիւնը չ'պիտի քաղցրացնէր իր կեանքը այսքան,  
եթէ լոկ ծնած ու մեռած ըլլար առանց ո՛ր և է  
ելեւէջի կառ փոփոխութեանց: Մարդս վայրկեա-  
նէ վայրկեան կ'սպասէ թէ՛ կրնայ բան մը ըլլալ.  
Կրնան իր բաղձանքները պատկուել և իր յոյ-  
սերը անբողջանալ, կրնան իր ցաւերն անհախել  
և նոր առողջութիւնով մը նոր կեանքի մը  
վերսկսիլ: Այս բոլորը բաղձանաց իրարու յա-  
ջորդ ներշնչումներով ա՛յնքան կը շլացնեն զմարդ  
որ մինչև իսկ իր ճրագի վերջին պլպլուքին

Անջ կ'ուզէ չ'հատնել, կը բաղձայ ապրիլ, ցոր-  
չափ աշխարհը կայ, անոր հետ հաւատարօրէն  
ապրիլ:

Սակայն մահու հրեշտակը իր կարգին մտիկ  
չընէր, ո՛չ զինքը, ո՛չ իրմէ փոքրը, ո՛չ հարուստը,  
ոչ աղքատը, ոչ երիտասարդը եւ ոչ իսկ անորմէ  
աւելի գեղատիւն: Ակնթարթի մը մէջ կը լրա-  
նան ամենը, ստոնց սկիզբն ու վախճանը՝ ան-  
թուելի փոփոխումներէ յետոյ կ'անյայտանան:

Սակայն թէ որքան տաժանելի է անյայ-  
տացումը կամ կորստեան այդ գերագոյն վայր-  
կեանք, բնական քեզ Ալի'ս, բոլորական արագըն-  
թացութեան մը մէջ իրարու ետեւէ կ'անցնին  
փոքրէն մեծը, անկարհուորէն նշանաւորը եւ  
նշանակելիէն մինչեւ մոռցուած գէպքերը,  
կ'անցնին, հոփ պէս կ'անցնին ատանց անգամ  
մը եւս ետ դառնալու:

Մտքին ծրագրած, յղացած մեծ ու փոքր  
բաները աչքիդ առջեւ կը պատկերանան ու  
իբենց լուռ ու հաւր լեզուներովը քեզ հետ կը  
խօսին, ատանց մէջ կան բաներ որոց արձա-  
նացեալ կերպարանքը աւելի վրիժառու երեւոյ-  
թով կ'ապասէ իր հատուցումին, հոն է ուր սիր-  
տըն ու խիղճը գտատատանի մը անայտ վերա-  
բերուլը մտաբերած, մրմնջող շրթունքի փոս  
փրստը կ'ընէ իր մեղայն ու թողութիւնը:

Գործուած մեղքի մը քառութիւնն է գա,  
որուն մոռցուած մասունքները նոյն բոպէին  
կ'ամփոփուին ու կը մարմնանան:

Վիճակը իր նոյնութիւնէն չ'չեղիր, սպառած  
ոյժին հաւաքական բայց ապիկար ճիզը նոր  
օրինակ գոչիւն մը կուտայ դրութեան: Յուսա-  
հատ վիճակն զձեռն փորձն ու պայթումն է,  
որուն կատարի զայրոյթը ալ յայտնի ու հա-  
մարձակ մեկնութիւն մը կուտայ կեանքի այս-  
քան անարժէք տեւականութեան ցաւին ու  
տանջանքին հաւար: Ու կ'սկսի աւելի զօրեղ ու  
յստակ կերպով տեսնել իրերը, աշխարհը, մարդն  
ու բնութիւնը:

Անկէ յետոյ կ'սկսի մնաք բարեաւը, վեր-  
ջին մնաք բարեաւը, նախ անոր՝ որուն զէմ  
եղած երկրաւոր դատաստանը զրկեց զինքը իր  
սիրած, իր պաշտած գեղեցիկ արեւէն, մի արեւ՝  
որուն բարեաց ճառագայթալից կենդանութիւնը  
պիտի ցողէր անդատանի մը ինքնարոյր ծա-  
ղիկները:

Սակայն աւա՛ղ, որ կը մարին այդ ամենը  
եւ մարդոց վախճանին հետ կորստեան մեծ ան-  
զուստն մէջ կ'անհետանան:

Հոն կ'սկսի արցունքը, այդ երկնառաք  
միտթարութիւնը, որուն աղի առուակին մէջ  
զինքերը սրտերը երարու պլլուած վերջին հրա-  
ժեշտը կուտան, ա՛ն, վերջին հրաժեշտը, իրարու  
հպող տաք ու վերջին հաւերոյրի մը փոխանա-  
կուումով...:

Այսպէս, սիրելի՛ Ալիս, արեգակը կը մարի  
եւ վշտի բունը իր կրածներէն ու զգացածներէն  
մի անգամ ընդ միջոյ կը դատարկանայ:

Բայց այսպէ՛ս են արդեօք կամ ո՞րքան ու-  
ղիկ, վիճակի այս սպաւորութիւնները, ատանք  
անշուշտ քեզ ալ պահ մը մտածել պիտի տան,  
միայն սա տարբերութեամբ որ ես աւելին լնտա-  
ժեցի նոյն իսկ անհանդուրժելի գրութեան ան-  
կողմին մէջ հիւստի:

Սակայն հիմակ ինձ կը թուի թէ իմ տե-  
սած բոլոր առարկայներս ինձի կը ժպտին, բա-  
րին ու գեղեցիկը սիրուածն ու հրապուրելին  
կառաջնորդեն զիս զէպի ինքը, զէպի՝ հոն՝ ուր  
իհարկէ տառապեցաւ, այնքան... ու կ'երեւա-  
կայեմ իր իսկութիւնը ճանչցած ու գիտցած հոգ-  
ւոյս կատարեալ շնորհիւրը:

Ա՛ն, Ա՛լիս, դեռ երկի տեսայ զինքը՝ արուր  
շատ ու շատ տխուր:

Իր սրտին ծածուկ ու թաքուն խաւերուն  
մէջ պահած իղձը զէպի իր խոստումը, զոր ցարդ  
ծածկելու քաջութիւնովը կը կեղծէր իր մեղա-  
ւոր ձեռնարկունքը, զինքը այլ եւս ընկճած են,  
եւ եթէ այսպէս տեւէ զգալի փոփոխութիւնները  
զուցէ այլ եւս չ'խափանուին, երնէ՛կ, թէ կրած  
տառապանքները ինչնիս հետ խառնուէին:

Ալիս, կայ արդեօք գաղնիք մը սիրոյ եւ  
սրտի մէջ, ատանց վրայ մտածած ստեղծ գոհու-

նակ եզրակացութեան մը հասնել կարողութիւնէս  
վեր եղած է:

Դժբաղդ ճակատագրի մը սեւ գծերը շատ  
գէշ վճարած են, որոց ծայրայեղ ընդդիմութիւնը  
չ'գիտեմ թէ՛ միջնա՞ն՝ ո՛ւր պիտի առաջնորդեն  
վրաս:

Այլ եւս գեղեցիկ սքանչելիքը, բնութեան  
հրապոյրը, նոյնպէս եւ մարդոց վայելած վա-  
յելքները զիս չ'են հետաքրքրեւր բնաւ, կարծես  
սիրտս անդուր մ'է, որուն մէջ միտացող թանձր  
մտիւր կ'ազատացնէ բոլոր առարկայները:

Կը կարծէ՞ք թէ վերջ չ'են ունենար ատանք  
այո՛ւ, ատանք ալ կը վերջանան, բայց թէ ինչե՞ր  
չ'պիտի յաջորդեն:

ԱՍՏՂԻԿ

ՄԷԿ ՊՏՈՅՏՍ

Կառքս կ'երթայ սրարշաւ ու ծառուղին  
չ'հատնիր, յիշատակներ  
կ'արթնան, ջերմ  
համբոյրներն կ'զգամ հոս, կ'ունկնդրեմ  
խոստումն իր, անձանթի մը  
կը տեսնեմ հոն գալ անցնիլն անձանթի մը  
նուսն, Կառքս կ'երթայ սրարշաւ ու ծառուղին չը  
հատնիր:

Այլ եւս հետի է գետը, հետի պարտէզ ու  
պալատ, Դաշտեր դալար աջ ու ձախ բաց տարածիլ  
կ'սկսին, Օրերէ վերջ զղջացած կը մօտի հոտ ինձ գու-  
նատ, կը նշնարեմ ստուերը արցունքին հետ միա-  
սին, Այլ լուս հետի է գետը, հետի պարտէզ ու պա-  
լատ:

Ընդհատած է ծառուղին, ընդհատած են  
եւ դաշտեր, Դէմս են Բուրգերն ցից կոթող բնութեան հին  
գարբուուն, Կառքս իջած կը քալում ու կը լսեմ կարծես  
գետ, Աւազներէն խշրտուքն թեթեւ քայլին մո-  
լորուն, Ընդհատած է ծառուղին, ընդհատուած են եւ դաշ-  
տեր:

Թեւը թեւիս, արեւոտուած հովանոցիս շու-  
քին տակ, — Ի՛նչ ես գուն, ինձ կը ժպտի հոս Սըխիսին  
յանդիւնան, — Քուկդ եմ, այո՛, միայն քուկդ, — վարդ այ-  
տերուն վրայ տաք՝  
Թոյլ կուտայ որ գրոյնեմ կոյս հաւերոյր ու խոտի  
ու երբեմն, Թեւը թեւիս, արեւոտուած հովանոցիս շուքին  
տակ:

Մեկնին մէջ գետնափոր խորչէ խորչ ցած  
ու մթին, Մինչ կը ջանամ սրոշել հետքերն հնոյն թողած  
հոն, Մէն մի քայլիս, ակնարկիս ան է սողին ու  
անդին, Կուրծքին ետքը կը գտնեմ, եփն աչքերուն  
սեւայօն, Մեկնին մէջ գետնափոր խորչէ խորչ ցած ու  
մթին:

Դուրս ելած եմ, կը մտնի հեռուն խա-  
րոյկն իրիկուան, կը պարփակին ծուխերով տարածն ու բացն  
հաւօրէն, կը խորհիմ որ դարձեալ նոյն ժամն է կեղծ  
երեւան, Ու կը կարծեմ թ'ուշացած մեկնիլ կ'ուզէ ան  
նորէն, Դուրս ելած եմ, կը մտնի հեռուն խաւերկն  
իրիկուան:

Յոյզերս ա՛լ իմ կը խեղդեն, չ'եմ գիտնար  
ու կ'ուլաւ... Գերեզմանի մը ծայրն եմ, խոր վերապի մ'ան-  
ժըխոր, Հոս հեծկտաց, — Մահէս վերջ՝ գոնէ տարին մէկ  
անգամ, Գերեզմանիս ե՛կ այցի, — Օ՛, ես կ'երթամ արեւն  
օր, Յոյզերս ալ իմ կը խեղդեն, չ'եմ գիտնար ու  
կուլաւ... : ԴԱՀԻՐԷ ԶՄԱՅԵԱԿ ՇԱԹՐԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՄԱՀՏԻ ՄԸ. — Մահխաղիոր չը  
հասկնաք: Կառավարութիւնը Վատի-Հալֆա  
աքորեց Տէրվիչ մը, որ կը յայտարարէր  
թէ՛ մարդարէութեան շնորհքը ընդունած  
է . և այս շաղակրատութեան համոզուած  
յիսունի չափ աշակերտներ հաւաքած էր իր  
շուրջը:

Տէյլի Մեյլի յիշատակած այս վտի-  
րիկ միջադէպներուն նմանները յաճախ  
տեղի կուենան Սուտանեան սահմանագը-  
լուիներուն վրայ, երբեմն ալ մեր մայրա-  
քաղաքներուն մէջ...:

Վերոյիշեալ Տէրվիչը թունուզէն և  
կամ թարապուլուսէն եկած կը կարծուի:  
Ահաւասիկ տեղական թերթերէն մ'եր  
քաղած տեղեկութիւններն, Վատի-Հալֆա  
աքորուած Տէրվիչ մարդարէին վրայ:

Վէլ-Թայլիի ազգական Ալի-Ապտիւլը՛ն-  
ըիմ անունով մէկը, կը յաւակնի յայտարա-  
րել թէ՛ Յիսուս մօտ օրերս յարութիւն  
պիտի առնէ: Այդէն Մուհամմադը՛ն և Մահման  
(ինչպէս նաև Մահմադիբը) յարութիւն ա-  
ռած ըլլալով, միմիայն Յիսուսը կը մնայ,  
ինչպէս նուիրական մատաններն գուշակած  
են զայս:

Կը յաւելու նաև թէ՛ նուիրական զիր-  
քերու պատուիրած ալօթքի և ծոմապա-  
հութեան տեղի չ'կայ, քանի որ մարդա-  
րէններուն դարը անցած է: Այս մարդարէու-  
թեան կը հետեւին և ընդունած են նոր գու-  
շակին ազգականներն և հայրենակիցներն,  
որոնք բազմաթիւ են:

Կառավարութիւնը այս անհամոյ գէպ-  
քերուն հետեանքը անախորժ ըլլալը նկա-  
տելով, շէյխերէ և իւլէ՛մաներէ բաղիպեալ  
ժողով մը գումարեց և ինքնակոչ մարդա-  
րէի մասին անոնց կարծիքը հարցուց, որոնք  
պատասխանեցին թէ՛ Մարդարէն հերետիկոս  
չարագործ մ'էր, և կառավարութիւնը այս  
մարդարէութեան ծաւալումը սահմանափա-  
կելու աշտանի միջոցները ձեռք առաւ:

— ԹՐԱՄՎԷՅՆԻԸ. — Իմայելիէի շը-  
րանցքին երկայնքը գանուող ծառայատնէշ-  
ները 5 մեթր եւ պիտի տարուին, թրամ-  
վէյներու կրկին գիծ մը հաստատուելու հա-  
մար: Թրամվէյներու ընկերութիւնը այս նոր  
ճամբուն շինութեան համար 1500 ոսկի  
յատկացուցած է:

— Գահիրէի բժշկական վարժարանին  
Տնօրէնը, չըջանաւարտներէն երկու երիտա-  
սարգներու համար, փոխանակ իրենց մրցու-  
մը այս տեղ անցնելու, որոշեց Բօր-Մայիլա  
զրկել տեղւոյն վրայ ուսումնասիրելու հա-  
մար հոն տիրող հիւանդութեան բնոյթը և  
այլ և այլ հանգամանքները:

— Ատենի մէջ ամուսնս 1 էն ասդին 20  
գէպը և 29 մահ պատահած է:

—Պոմպեյի մէջ ալ ընթացիկ ամսոյս 4 էն սկսեալ 195 ժանտարիտի նոր դէպք և 134 մահ պատահած է:

—Բ. Խտիվը Եւրոպա մեկնելէն առաջ Միւսիդիաններու Բարեգործական ընկերութեան նախագահ Ապոէլ-Քատէր փաշա Հելմի 100 ոսկոյ գումար մը յանձնած է Հնդկաստանի սովեալներուն զրկուելու համար:

—Փորնաջ Օժիսիելի մէջ ուրախութեամբ կը կարգանք թէ՛ Բարձր Խտիվը բարեհաճած է երրորդ կարգի Օսմանիյէի պատուանշանը շտրկել Տիար Զարեհ Սըվազիի որուն կը ներկայացնենք մեր ինքզանցութիւնները այս բարեպատեհ առթիւ:

—Ուիստիոսի մէջ Խտիվական շոգեհաւային ընկերութիւնը՝ ներքին գործոց նախարարութեան կողմէ իրեն ուղղուած դիտողութեան վրայ խօստացած է թիչ օրէն շոգեհաւային գրկել Եանաօ, փոխադրելու համար Եգիպտոցի բազմաթիւ ուխտաւորներ, որոնք շոգեհաւայի կ'սպասեն տեղերին գառնալու համար:

ԱՐՁԱՌՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ. —Արշաունքու հիւանդութիւնը կը շարունակէ աւերել ընկերականութիւնը և փորձառու բըժիշկ Փիօ Պէյի կարծիքին նայելով, այս համաճարակին հետեանքները աղետալի չի պիտի ըլլան, բայց բաւական ժամանակ պէտք է որ բժշկուած արջառը կարենայ երկրագործութեան ծառայել:

Ահաւասիկ Եգիպտոսի մէջ արրող ժանտարիտին համար Փինքիկ փաշայի շարժական տեղեկագիրը:

Յունիս 5 ին վերջացող շաբթուան մէջ ժանտարիտի 15 դէպք և 7 մահ պատահած են Եգիպտոսի մէջ, որոնց 14 դէպք և 7 մահը Բօթի-Սայիտի մէջ և մէկ դէպք Տամիէթի մէջ: Տամիէթի դէպքը Բոր Սայիտէ եկող նսու մը մէջ պատահած է որն անմիջապէս մեկուսացուած է: Յաւայի է որ այս շաբթուան մէջ հիւանդանոցէ դուրս երեք մահեր պատահեցան Բօթ-Սայիտի մէջ:

Աղեքսանդրիոյ մէջ հետեւեալ սրտաշարժ տեսարանը տեղի ունեցած է, կառավարական պալատին մէջ:

Տեղացի կին մը իր ութը զաւակներով շրջապատուած, եկած էր իւր ամուսնոյն ուխտի դնալէ առաջ, իբր երաշխաւորութիւն ձգած գրամը պահանջելու:

Իժմաղդ կինը փոխանակ իր պահանջած գրամը ընդունելու, լսեց մահուան տխուր լուրը իւր ամուսնոյն, որ Հիճալի կողմերը Պէտէվիները գողութեան շարժառիթով սպաննած էին և անոր ամբողջ հարստութիւնը կազմող 32 ոսկին կողոպտած:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

—Լորտա 4 Յունիս. —Գնդապետ Մահօնի զօրախումբը Մէֆթիկէն ճամբայ ելած է, զօրավար Սըր Հանթէրի բանակին միանալու համար, ցարդ չ'գիտցուի թէ՛ ո՞ր պատահած են իրարու:

Զօրավար Հելմեառ սր վերջերս Իւթբէլուրը գրաւած էր. այժմ Լէնկա — Նէք

թշնամեաց կողմէ պաշարուած գիրքերը բռնելու նպատակաւ կը յառաջանայ:

—Լոնտրա 5 Յունիս. — Անգղիական զինուորներ, կէս օրէն վերջ Բրեթարիա մտան. սակայն նախորդօրը այդ տեղերին բոլորափր տակալի կուսակերտներ ունեցան:

—Լոնտրա 5 Յունիս. — Այս կէս օրէն վերջ Մէնչըն-հուլի առջև հայրենասիրական ցոյցեր տեղի ունեցան, անկարգութիւնը այն ստիճան էր որ գրէթէ ժամու մը չափ թու մը միտափառիկ մարդիկ, բազմութիւնը նախատեսելի և կողոպտեցին:

—Թիէն-Չին 5 Յունիս. — Պօքսըրները Փէքինի հրկածուող պաշտպանութեան համար զրկուած չինաց զինուորները հալածեցին. վախճուն չինացիներ սպաննուեցան: Պօքսըրները Թիէն-Չին քաղաքին վրայ յարձակեցան: Այս պահուս Եւրոպական զինուորներ ցամաք կ'ելնեն:

Եէն-Չինի Անգլիացի միսիօնարը, նօրման, որ կորսուած էր, գազանաբար սպաննուած է եղեր:

Թայլը Զինաստանի կացութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ՛ յայտնի է որ ճգնաժամի մը առջև կը գտնուինք որ ոչ միայն դիւանագիտական այլ լուրջ միջոցներու ձեռք առնուիլը կը պահանջէ:

—Լոնտրա 5 Յունիս. — Փ. և Օ. Սթիմչիփ ընկերութիւնը 5,000 ոսկի տուաւ Հնդկաստանի սովեալներուն համար:

—Ուաշինկթըն 6 Յունիս. — Փէքինի Միացեալ Նահանգներու դեսպան Պ. Գոնփըրը կը հեռագրէ թէ՛ կացութիւնը կը ծանրանայ: Ամերիկեան թնթանօթակիր մը հրաման ստացաւ անմիջապէս Թիէն — Չին երթալ:

—Փարիզ 6 Յունիս. — Զինաստանի մէջ կացութիւնը ծանր է: Թիէն — Չին Փէքին գալու երկաթուղին գրաւուած է. Եւրոպական զինուորներու պզտիկ խումբեր կը շարունակէն ցամաք ելլել:

Երկու հազար Ռուս Թիէն — Չին կը պատուին:

Լոնտրա 6 Յունիս. — Լորտ Ռօպըրթս կը հեռագրէ թէ՛ նորբալքի գուբը ձիէն ինչալուն պատճառաւ երանքողը խախտած է:

Լոնտրա 6 Յունիս. — Լորտ Ռօպըրթս կը տեղեկագրէ թէ՛ Լորտ Մէթուրն 25 ժամուան գնացքէ մը յետոյ 3000ի չափ Պօէրներու վրայ յարձակած և փախցուցած է:

—Լոնտրա 7 Յունիս. — Հարաւային Ափրիկէի հեռագիրները ուշացան ընդժողեայ հեռագրութիւն մը խզուելուն պատճառաւ: Գերիներուն ազատման և զօրավար Պօթայի հետ կուռող զօրաց մասին գեռ ոչ ոք բան մը գիտէ:

Յունիս 1 ի և 2 ին ընդհարումներուն մէջ տեղի ունեցած կորստներուն ստոյգ ցուցակը գեռ նոր հասաւ Ասիկայ հաւանորէն կը պատկանի Լորտ Մէթուրնի խմբին, բայց մանրամասնութիւններ չ'պարունակէր:

—Լոնտրա 7 Յունիս. — Արշաունակ խոսովութիւններ տեղի ունեցան Պէլֆասիթի և Լոնդոնի մէջ, Թրանսիլի դէպքերուն յայտնուելուն պատճառաւ:

Բազմաթիւ անձինք փրատուած են: Ոստիկանութիւնը շատ մը ձերբակալումներ կատարած է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՅՐԱՆՍԱ

ՅՈՒՅԱՀԱՆԻՍԻՆ ՄԷՋ. — Գողութիւն մը տեղի ունեցած է Թուօպատէրօի Եգիպտական բաժնին մէջ:

Գոհարիկնաց և Ասեղնագործութեանց վաճառական մը, Նէսիմ Սասօ, իւր հաստատութիւնը բանալու եկած ժամանակ, նշմարեց որ 1200 ֆրանք, պանդտօն մը և բաւական թուով մանեակներ, ապարանջաններ և այլն պարունակող պայուսակ մը վերցուած էր գողերու կողմէ:

Գնուութեան մը արգիւնքով հաստատուեցաւ որ առաստաղին մէջ ծակ մը բացուած էր և գողերը անկէ անցած էին:

Գոհարավաճառը կատարուած այս գողութեան դէմ բողոքեց ոստիկանութեան վերակացուն:

ՀԱՊԷՇԻՍՏԱՆ

ՅՈՅՆԵՐԸ Ի ՀԱՊԷՇԻՍՏԱՆ. — Աղեքսանդրիոյ Յունական հիւպատոսարանը ժորթ թագաւորին ինքնագիր մէկ նամակը ընդունեց որ պիտի հաղորդուի Նէկիոս մէնքլիին տեղեկացնելու համար թէ՛ Հապէշիստանի մէջ գտնուող յոյն հպատակները առկէ վերջ Անգլիոյ պաշտպանութեան տակ պիտի ըլլան: Թագաւորը կը հրահրէ ըզ Մենքլիք այս հանգամանօք ճանչնալ Անգլիական ներկայացուցիչը:

ՀԵՂՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՄ 8 ՅՈՒՆԻՍ 1900

2745	2903	7945	754	9724	255	355
1419	1671	1844	1191	1845	1712	1904
2115	3798	4233	4262	5177	6152	6986
7836	8279	8720	8331	9693	9552	

ՊՕԷՐՆԵՐՈՒՆ ՎԵՐՁԻՆ ՉԱՌՈՂՈՒԱԾ ՔԸ ՄԷՖԹԻՆԿԻ ԱՌՁԻԻ

Անցեալ Մայիս 12 ին առաւօտեան ժամը 4 ին էր, երբ Պօէրները գերագոյն փորձ մը ըրին Մէֆթիկէն առնելու. փորձը սկսաւ կատարի հրացանաձգութեամբ մը քաղաքին արեւելեան կողմէն. բայց ասիկայ լսկ կեզնու մ' էր. ձիւտ գրէթէ միւսնոյն ժամանակին Գաղաքին Հիւսիսային աշուճտեան կողմէն բոցերը կը բարձրանային ընկնելու թաղէն: Հրամանատար Էլօֆը իր 300 Պօէրներով հոն մտած էր և զայն հոյ ճարակ ըրած. իր հետ կային Պըրօն (Փրանսացի) և Վայս հարիւրապետները: Ոստիկաններու ամբողջ այս թաղին մէջ էր հրամանատարն էր գնդապետ Հօր որ երեք հարիւրապետով 15 ենթասպայով ամբողջ պահակազուրը կը կազմէր: Մէֆթիկէի հրամանատար գնդապետ Պէյտեօուիլ, Հօր գնդապետին կը հեռաձայնէ ետ քաղաքը, բայց շատ ուշ էր: Պօէրները զանոնք յանկարծակի բերած և գերեվարած էին. Էլօֆ անձամբ կը պատասխանէ հեռաձայնով:

Այն ատեն մէջտեղ կուգան այդ արիւստիք փորձի պահակազուրին և իւր քաղաքի հրամանատարին սրանչի յատկութիւնները, իրենք իրենցմէ Անգլիական ցուած ջոկատները կը վերակազմուին պատանէներուն մէջ Էլօֆին ետեք, որ յանկարծ պաշարուած գտնուեցաւ: Պէյտեօուիլ այն

ատեն կը կեդրոնացնէ իր բոլոր տրամա-  
գրելի ուժերը բնիկներու թաղին մօտ և  
իր բոլոր ճիգը հոն ի գործ կը դնէ:

Երեսուներ չափ Պօէրներ կը կզդիանան  
և քաղաքի մը մէջ կը պաշարուին. ու-  
րիշ հարիւրի չափ ալ Պօէրներ բնիկներուն  
թաղին շուրջը գտնուած փոքրիկ Բօրիէի  
մը մէջ կը շրջապատուին:

Էլօֆ ոստիկաններու ամբողջին մէջ  
պատնէջաւորուած երբէք չի կասկածիր. ար-  
դէն սուրհանդակ մը զրկած է աւետելու  
թէ՛ Մէֆֆինի իր ձեռքն էր. յանկարծ նշ-  
մարեց որ ինք Անդղիական Ղոկատէ մը պա-  
շարուած էր, որն որ բերդին և բնիկներուն  
թաղին ետեւ պատերէն սողոսկելով զինքը  
շրջապատած էր:

Ինքնամօթ մը կը բերուի Քարփակին  
30 Պօէրներուն գէմ. որոնցմէ վեցը կ'ս-  
պանուին. և մնացեալներն անձնատուր  
կ'ըլլան և Մէֆֆինի կը բերուին, ուր տըր-  
տոււմ տիւրը և գլխիկորէր քաղաքին փողոց-  
ներէն կ'անցնին:

Ապա գնդապետը ումարտեց իր զուտայ  
Քօրիէն և Բիրտը. Քօրիէն գրաւող Պօէրները  
Քաֆրներուն հիւղերը կ'ապաստանին:

Երեկոյեան գէմ բերդը ուսմբերու և  
գնդակներու տարափին տակ այլ ևս աւերակ  
զարձած էր. յանկարծ ձայն մը կը բարձ-  
րանայ անկից որ անդլիերէն կը գոչէ՝ «գաղ-  
րեցուցէ՛ք կրակը». այս գոչողը ազդուն  
էլօֆէն, գերի բռնուած հարիւրապետներէն  
մին էր. Պօէր հրամանատարը իր գերիներ-  
բուն յանձնուած էր:

Քաղաքը աղատուած էր... :  
Երեք օր յետոյ հոն կը մնար Մահոն  
գնդապետին հրամանատարութեան տակ  
օգնական գունդը:

### Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ ունի ծանուցա-  
նել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս  
սկսած է իւր Փազար-Մրուրի խանութին մէջ  
պատրաստել Եմէնի սուրճին ամենաընտիր  
և անխարդախ տեսակէն իրեն զիմով յաճա-  
խորդներ օրան 16 զըշ ողջի հաշուով, զուտ  
խալէ պիտի կրնան գնել. կըռոյ մէջ ալ ուղ-  
ղամտութիւն գտնելով:

### ՆՈՐՈՒՓԻՆՆԵ ՄԵ

Մինչև ցարդ սովորութիւն չէ եղած կամ  
քիչ պատահածէ, որ հայ թերթերու վարչութիւնք  
մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստեպ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ  
թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ  
մը ունենալ ցանկացողին կողմէ և. զրեթէ գտնել  
անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս» ի հրատարակման առաջին  
օրէն, մեր սպառումին քանակը ինկատի ունենա-  
լով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքա-  
ծոյի համար աւելի տպագրել տուած և. առաջին  
վեցամսեայ կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Ար-  
շալոյս» ի առաջին վեցամսեայ կազմուած ունե-  
նալ, կրնան զիմել թիւթիս ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Կաթկազմին համար 10 ֆրանքի գուճարով  
զրկելով մեզ:

Դարձեալ արտասահմանի ո՛ր և է թերթի բա-  
ժանորդ գրուել փափաքողներէն անոնք որ զի-  
րութիւնը չ'ունին անոնց խմբագրութեաց հետ  
յարաբերութեան մասնելու, կրնան մեզի գրիմել:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

### Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՇՈՒՆԳԱՐԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել իր արտա-  
ներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու  
առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարու-  
նակելէ և. կատարեալ փորձառութիւն ստանալէ  
վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քա-  
նակութեամբ ապագրանք տուած է և. յետ այսու  
մինչև ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ  
գներով պիտի վաճառէ:

Իրեն զիմով գնորդները կատարելապէս գոհա-  
ցնելու և. մինչև ցարդ այս առեւտուրին շուրջը  
տեղի ունեցած գովոնութիւնները բաւանաւորու-  
մարմեծ հոգածութիւն պիտի ունենայ. և. անոնք  
որ Ա. Պարտի տոմսերը ունին իրենց քով, մինչև  
վերջին Գլխաւը յիստորով հանդերձ իրենց պիտի  
զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքիի մէջ Պ. ԳՕՆՈ-  
ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն կը ծախուին նաև իՄուսքի,  
Տիւրքի. Պալլազեանի խանութին:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսե-  
րու գները:

Համպուրկի 7 Գլխա. իւրաքանչիւրը 131)2էն,  
ամբողջ 96:

Պրոնսվիկի 6 Գլխա. իւրաքանչիւրը 16 զրու-  
չէն, — ամբողջ 96:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլա-  
սի թիւերը արդէն հասած են և. հրապարակ ելած:  
1 — 8

### Կ Ո Պ Է Ռ Պ Է Ն Լ Ե Ա Ն

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տանկերու տարիներ շարունակ կարեւոր  
լուսանկարչատուններու մէջ աշխատելով,  
արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և.  
փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապուլլահ եղբայր ասն,  
ինչպէս և. ուրիշ մի քանի ծանօթ տուններու,  
քաղաքիս մէջ վերջին անգամ Լ. Ե. Բ. Ե. Ե. Ե.  
գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը  
վարած, այժմ առանձին գործատեղի մը  
կը հիմնէ Էօզպէֆ իյե Շարխա Գաւմէշ Օթէլ.  
ՇէֆէրՏՍԻ ճիշտ դիմաց թիւ 3 արարթըմանին  
երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-  
նկարներ, ինչպէս և. դուրսը կուսկներ  
ի հարկին:

Արանսիան քնական մեծութեամբ,  
կենդանագիրներ ամբողջական մեքենայով  
որոնք երբէք չ'են աւրուիր:

Փունաւոր լուսանկարներ ամեն մե-  
ծութեամբ քնական գոյներով միլեւաքիս:

Իւզաների և. ջրաների պատկերներ և. ըն-  
Լուսանկարի և. պատկերահանութեան  
վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն-  
դունի ռըթոր, Տէվէրքըն և. ըն.

Իրեն զիմով յաճախորդներն հանել տուած  
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր  
մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

### Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ի Ա Լ Լ Ա Յ Յ

Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Շ Ի Ա Ր Հ Ի Ա Մ Ե Ն Ե Ն Հ Ա Ր Ո Ւ Ս Ե Ե Թ Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ե

Ե Ր Ա Շ Ա Ի Ո Ր Ե Ա Լ Գ Ր Ա Մ Ա Գ Լ Ո Ւ Ի 1 Մ Ի Լ Ե Ա Ր 4 3 7 Մ Ի Լ Ի Ո Ն

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-  
նէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած  
է կամ ի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ  
4 8 0 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ  
և է ընկերութեան մէկ միլեար աւելի է:

Ս. Լ. Ե. Ս. Ր. ընդհանուր ներկայացուցիչ  
Ի Գահիրէ

### ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒՆԵԱՆ

Ի Շարխա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից  
վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ  
ժամը (ը. ե. ) 9էն 11 որոշած ըլլալով կը  
խնդրէ մէզմէ ծանուցանել զայդ, ի գիտու-  
թիւն իրեն գրիմել ուզող ազքատ հիւանդ-  
ներու: 5—8

### ՏԻՐԱՆ ՀԻՐՄԻԻՉԵԱՆ

Շարխա Սօնալէս Այի՛վ, կարտիս ղեդարանին քով:

Իրեն զիմով յոճախորդաց, տոկուն  
սպրանքներով և նորաձեւութեան համա-  
ձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել  
կը խոստանայ խիստ չափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն  
գիմուր, սրտի գոհունակութեամբ պիտի  
մեկնի և ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ  
ունենալու համար՝ դարձեալ Հիւրմըլեանը  
պիտի փնտռէ: 7—8

### ԳՐԵՑ ՈՒՋՈՂՆՍԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հա-  
սարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝  
կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք,  
(Իսաական, Դպրոցական, Իսիական, Իրական  
Արտեսական, Բանասիրական, Վիպական  
եւ այլն) որ հրատարակուած են և կը հրա-  
տարակուին Պոլսոյ, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆ-  
լիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրա-  
մատելի պայմաններով ձեռք բերել՝ գի-  
մելով Տիւրքի. Նաւասարգեանի, Գալստեան  
վարժարան Հայոց ի Գահիրէ:

### ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԹ

Ապրիլ Շարխա Գոթպի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-  
սակի յարմար բնտիր սպրանքներով կեղծ  
սկուաներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս սկուայի  
ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօքով իւր  
պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-  
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաններուն տոկունու-  
թիւնն առ նուազն երկու տարուան համար  
կ'երաշխաւորէ:

Վկայեալ ազքատներու ձրի գարմանում,  
ամեն օր կէսօրէ ետք ժամը 5—5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն-  
կերութեան աւելի երաշխաւորութիւններ ,  
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-  
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ  
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

Ա.Լ.ԲՄԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-  
կատար յԱղեքսանդրիա: